ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է 2018-2019 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ՝ նպաստի ձևով՝ ուսման վճարի փոխհատուցմամբ, հեռակա ուսուցմամբ, անվճար հիմունքով:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ինստիտուտի ռեկտորի անունով, կից ներկայացնելով՝ բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ու դրանց հավելվածների պատճենները, կադրերի հաշվառման թերթիկը, 3x4սմ չափսի 3 լուսանկար, ինքնակենսագրություն, գիտական ռեֆերատ՝ ընտրած մասնագիտությունից կամ հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը:

Ընդունվողն անձամբ է ներկայացնում անձնագիրը և դիպլոմը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «Օտար լեզվի» (անգլերեն՝ «TOEFL») և «Ինֆորմատիկա և տեղե-կատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների ընդունելության քննությունների արդյունքները:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև 2018թ. դեկտեմբերի 1-ը:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության ժամկետ է սահմանվում ս.թ. դեկտեմբերի 5-ը (ներառյալ):

Դիմումները ներկայացնել հետևյալ հասցեով՝

ք.Երևան, Ալեք Մանուկյան 11,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն:

հեռ. (010) 55-33-10(1-22), (010) 55-33-10(1-17)